# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/121

«15» Ապրիլի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնք ավագանու 2019թվականի ապրիլի 15-ի թիվ 10-Ա և 11-Ա որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093 33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» Ապրիլի 2019 թվականի N 10-Ա

## ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի ապրիլի 15-ի նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. ապրիլի 15
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե ի. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» Ապրիլի 2019 թվականի N 11-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի , 1-ին կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով՝ Ձորագետ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

Ընդունել ի գիտություն Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Ձորագետ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի :

| Կողմ ( 5 ) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | |
| ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ | | |
| ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ | | |
| ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ | | |
| ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ | | |

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. ապրիլի 15
ի. Ձորագետ

Հավելված

Զորագետ համայնքի ավագանու

«15» ապրիլի 2019թ. N 11-Ա որոշման

# ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Զորագետ համայնքի 2019վականի բյուջեի առաջին եռամսյակը կատարվել է.

Զորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 1970.8 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 1483.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 132.9%: Ընդ որում՝ Զորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի վարչական մասով ծրագրված (ճշտված) 1483.0 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 1970.8 հազար դրամ՝ ապահովելով 132.9% կատարողական:

Զորագետ համայնքի 2019 թվականի բյուջեով առաջին եռամսյակի սեփական եկամուտները ծրագրվել են 399.1 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 709.4 հազար դրամ կամ 177.7%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է 2018 թվականի համապատասխան ցուցանիշից 199.9 հազար դրամով:

Զորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի միջոցների հաշվին իրականացվել է 653.5 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 11.7%-ը: Հարկ է նշել, որ 2019 թվականի առաջին եռամսյակի ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:
Ստորև ներկայացվում է Զորագետ համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Հարկեր և տուրքեր.

- Գույքահարկի գծով առաջին եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 181.9 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 79.6հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 228.5%, որը 2018 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 16.1 հազար դրամով:
Հողի հարկի մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 25.0 հազար դրամ, նախատեսված 20.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 125%, որը 2018թվականի փաստացի ցուցանիշից պակաս է 4.7 հազար դրամով:
- Տեղական տուրքերի գծով առաջին եռամսյակի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 491.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 284.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 172.9%, որը 2018 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 177.0 հազար դրամով:

Պաշտոնական դրամաշնորհներ.
Պաշտոնական դրամաշնորհների մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 1061.4հազար դրամ, ծրագրված (ճշտված) 1083.9 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 97.9%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 1061.4 հազար դրամ:
Այլ եկամուտներ.
Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեով առաջին եռամսյակի այլ եկամուտների գծով նախատեսված 15.5 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 11.5 հազար դրամ, որից.
- գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 11,5 հազար դրամ, ծրագրված 15,5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 74.2%,
Մուտքեր տյուժերից և տուգանքներից
Ձորագետ համայնքի 2019 թվականի բյուջեով առաջին եռամսյակի Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով փաստացի մուտքը կազմել է 200.0 հազար դրամ,
*Ծախսեր*
Ձորագետ համայնքի 2019 թվականի առաջին եռամսյակի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 653.5 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 5606.0 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 11.7%-ը:
Ձորագետ համայնքի 2019 թվականի առաջին եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի

հազար դրամ

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը | Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված | Փաստացի ծախս | Կատարման % |
|---|---|---|---|
| Աշխատանքի վարձատրություն | 1075.0 | 598.5 | 55.7% |
| Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման | 83.0 | 30.0 | 36.1 |
| Վարչական սարքավորումներ | 500.0 | 0 | 0 |
| Սոցիալական պաշտպանություն | 25.0 | 25.0 | 100% |
| Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 3923.0 | 0 | 0 |
| Ընդամենը | 5606.0 | 653.5 | 11.7 |

Զորագետ համայքնի 2019 թվականի առաջի ն եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

| Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը | Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված | Փաստացի կատարված | Կատարման % |
|---|---|---|---|
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 1658.0 | 628.5 | 37.9% |
| Սոցիալական պաշտպանություն | 25.0 | 25.0 | 100% |
| Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 3923.0 | 0 | 0 |
| Ընդամենը | 5606.0 | 653.5 | 11.7% |

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ